

ԱՐԱԲԵՐԵՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Տերմինաբանությունը՝ որպես գիտակարգ, առաջացել է 20-րդ դարում և լեզվի բառային կազմի համալրման հիմնական աղբյուրներից մեկն է: Մինչ օրս «տերմին» հասկացությունը չունի միասնական համընդհանուր սահմանում: Ըստ «Լեզվաբանական հանրագիտական բառարան»-ի «տերմին»-ը (լատ. terminus - եզրագիծ, սահման) «գիտելիքի հատուկ ոլորտի գաղափար կամ գործունեություն նշանակող բառ կամ արտահայտություն է: Տերմինը ներառված է լեզվի ընդհանուր բառարանային համակարգում, բայց միայն հատուկ տերմինաբանական համակարգի միջոցով (տերմինաբանություն)»¹: Իսկ ըստ լեզվաբանական բառարանի՝ «տերմինը հատուկ նշանակության բառ կամ արտահայտություն է՝ ստեղծված ճշգրիտ արտահայտելու հատուկ հասկացություններ և նշելու հատուկ առարկաներ»²:

Արաբերենի հնագույն բառարաններում, ինչպիսիք են *لسان العرب* ([*lisan al-‘arab*]), *تاج العروس* ([*taġ al-‘arūs*]), *المعجم المحيط* ([*al-m ‘ġam al-muḥīṭ*]), «տերմին» (المصطلح [*al-muṣṭalaḥ*] և الاصطلاح [*al-iṣṭilāḥ*]) նշանակող բառեր չեն հիշատակվում:

Շատ լեզվաբաններ որպես տերմինը հատկանշող առանձնահատկություններ են նշում իմաստային հստակությունը, մասնագիտական որոշակի ոլորտի պատկանելը, խոսքային միջավայրում չեզոք արտահայտությունը, մենիմաստությունը:

Արաբերենում «տերմին»-ի համար օգտագործվում են *المصطلح* [*al-muṣṭalaḥ*] և *الاصطلاح* [*al-iṣṭilāḥ*] բառերը, որոնք հոմանիշներ են և կազմված են *اصطاح* [*iṣṭalaḥa*] բայից: Սակայն արաբերենում առավել հաճախ կիրառական է *المصطلح* [*al-muṣṭalaḥ*]-ը:

Արաբերենում կան նաև «տերմինաբանություն»-ը սահմանող մի շարք տարբերակներ՝ *علم المصطلح* [*‘ilm al-muṣṭalaḥ*], *علم الإصطلاح* [*‘ilm al-iṣṭilāḥ*], *المصطلحية* [*al-muṣṭalaḥīyyah*], *علم المصطلحات* [*‘ilm ul-muṣṭalaḥāt*]: Ինչպես «տերմին» բառի պարագայում, այնպես էլ «տերմինաբանություն» բառի համար (*علم المصطلح* [*‘ilm al-muṣṭalaḥ*]) լեզվաբանական ուսումնա-

¹ Лингвистический энциклопедический словарь/ Гл. ред. Ярцева В. Н. М.: Сов. энциклопедия, 1990, с. 508.

² Словарь по языкознанию, Под общ. ред. Сулейменовой Э. Д. Алматы: Ғылым, 1998, с. 380.

սիրության շրջանակներում կիրառվում է *المصطلح* [al-muṣṭalah] տարբերակը:

Գրական արաբերենը իր բառապաշարի տեսանկյունից բաժանվում է *اللغة العامة* [al-luġah al-‘āmmah] (համընդհանուր օգտագործման, ընդհանուր լեզու) և *اللغة المتخصصة* [al-luġah al-mutaḥaṣṣiṣah] (հատուկ, մասնագիտական լեզու), որն էլ իր հերթին բաղկացած է հատուկ ենթալեզուներից: Համաձայն Ա. Վ. Սուպերանսկայայի, Ն. Վ. Պոդոլսկայայի և Ն. Վ. Վասիլևայի՝ «ընդհանուր բառապաշարը լեզվի հիմքն է, իսկ ենթալեզուներից (տերմինաբանական համակարգերից) բաղկացած հատուկ բառապաշարը՝ դրա շրջագիծը»³: Գոյություն ունեն ինֆորմատիկայի, քիմիայի, քաղաքագիտության, աշխարհագրության և այլ ենթալեզուներ:

Հատուկ բառապաշարի առանձնահատկությունն այն է, որ ունի սահմանափակ կիրառություն և հատուկ նպատակ, ուստի կարող է անհասկանալի լինել ոչ մասնագետների համար: Օրինակ՝ դիվանագիտության ենթալեզվում կան տերմինաբանական միավորներ (**արարողակարգ, նոտա, ագրեման, էկզեկվատուրա** և այլն), որոնք ոչ մասնագետին, հնարավոր է, անձանոթ են: Եվ չնայած գործածության նեղ շրջանակին՝ մասնագիտական բառապաշարը շարունակական փոխազդեցության ու զարգացման մեջ է: Այս առումով արաբերենի դիվանագիտական տերմինաբանությունը բացառություն չէ:

Արաբերենի բազում տերմինահամակարգերի մեջ առանձնացվում է դիվանագիտական ենթալեզուն: Այն պարունակում է մասնագիտական բազմաթիվ տերմիններ, որոնք նույնիմաստ են տարբեր լեզուների նույն տերմինահամակարգում, բայց ոչ միշտ են հասկանալի նույն լեզվով խոսող մարդկանց համար: Դիվանագիտությունը պահանջում է առավելագույն ճշգրտություն, որն ապահովվում է դիվանագիտական լեզվում առկա տերմինների միջոցով:

Դիվանագիտական տերմինաբանությունը դիվանագիտական փաստաթղթերի բառապաշարի հիմնական բաղկացուցիչն է: Դիվանագիտական խոսույթում տերմինների գործածությունը խոսքի տրամաբանականության, հանդիսավորության և դիվանագիտական քաղաքավարության, ճշգրտության երաշխիքն է:

Դիվանագիտական տերմինները կարելի է բաժանել համընդհանուր գործածության (հասկանալի է տվյալ լեզվով խոսող անհատների մեծամասնությանը, օր.՝ **դիվանագետ, դեսպանություն** և այլն) և նեղ մասնագիտական (հանրորեն քիչ կիրառվող տերմիններ, որոնք գործածվում են միայն մասնագետների կողմից, օր.՝ **հավատարմագիր, գործերի հավատարմատար, կցորդ, դեսպանորդ** և այլն) տերմինաբանության:

³ Суперанская А. В., Подольская Н. В., Васильева Н. В. Общая терминология: Вопросы теории. М.: Наука, 2003, с. 28.

Դիվանագիտական տերմինաբանությունն առաջացել և զարգանում է արտաքին աշխարհի հետ փոխհարաբերությամբ: Այս գործընթացի հիմքում ընկած են պետությունների ձևավորման, միջազգային հարաբերությունների զարգացման, դիվանագիտության ծագման և այլ գործոններ:

Որպես տերմինաբանական համակարգերի հիմք՝ տերմինների կազմության և դրանց եղանակների հարցը միշտ եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Ս. Վ. Գրինյովն առանձնացնում է տերմինների կազմության իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական, ձևաբանական-շարահյուսական և փոխառության եղանակները⁴: Ալ-Համգաուին իր հերթին տալիս է տերմինների կազմության չորս եղանակ՝ الاشتقاق [al-iāṣtiqāq] (բառակազմություն), المجاز [[al-maǧāz] (բառային-իմաստաբանական ածանցում), التعريب [al-ta‘rīb] (արաբականացում), النحت [al-naḥt] (հապավում)⁵:

Հիմք ընդունելով տերմինների կազմության վերոնշյալ եղանակները՝ ստորև կներկայացնենք արաբերենի դիվանագիտական տերմինաբանական համակարգերի համալրման հետևյալ միջոցները՝ **փոխառություն** (օտար լեզուներից բառային միավորների ներմուծում, ինչպես նաև բառապատճենում), **բառային-իմաստաբանական** (հոմանիշներ, համանուններ և բազմիմաստություն), **շարահյուսական** (որի միջոցով ստեղծվում են տերմինաբանական բառակապակցություններ և բարդ տերմիններ), **ձևաբանական** (կոնվերսիա և ածանցում), **ձևաբանական-շարահյուսական** (էլիպսիս, բառաբարդում և հապավում) և **թարգմանություն**:

Դիվանագիտական տերմինների կազմը համալրելու առումով կարևոր դեր ունեն **փոխառությունները**: 19-20-րդ դդ. պետությունների մեծ մասը այլ պետությունների հետ պաշտոնական հարաբերություններում միտված էր գործածելու իր մայրենի լեզուն: Այնուամենայնիվ, նախ լատիներենը, ապա ֆրանսերենը մեծ ազդեցություն են ունեցել դիվանագիտական տերմինաբանության զարգացման վրա: Անգլերենը որպես միջազգային լեզու, 20-րդ դարում սկսում է որոշակի ազդեցություն ունենալ արաբերենի տերմինաբանության զարգացման վրա: Տերմինների մեծ մասը փոխառություններ են այս լեզուներից, օր.՝ **diplomat, modus vivendi, persona non grata** և այլն:

Մուտք գործելով լեզու՝ փոխառված բառը կարող է ընդհանրապես ձուլման գործընթացներ չանցնել, պահպանել այն լեզվի տեսքը, որից փոխառված է, օր.՝ **charge d'affaires, veto, consul, communique**, կամ կրել սովյալ լեզվին բնորոշ առանձնահատկություններ, օր.՝ **diplomacy, credentials, recognition** և այլն:

Փոխառություններն արաբերենում սովորաբար երկու ձևով են

⁴ Ст' u Гринев С. В. Введение в терминоведение, М.: Московский лицей, 1993, էջ 128.

⁵ محمد رشاد الهمزاي، المنهجية العامة لترجمة المصطلحات وتوحيدها وتنميطها، بيروت، 1986، ص. 40.

հանդես գալիս. կա՛մ փոխատու լեզվից անցնում և գործածվում են անփոփոխ, կա՛մ կրում են արաբերենին բնորոշ բառակազմական ու ձևաբանական մասնակի փոփոխություններ:

Օտարալեզու բառային կազմությունների փոխառումը արաբերենում հանգեցնում է բառարմատների հարստացմանը, դառնում է լեզվի բառային ձևային որոշակի քանակական փոփոխությունների պատճառ և իմաստային մակարդակում թողնում է տեսանելի հետևավանքներ⁶:

Եթե հնում արաբերենում տերմինաբանական համակարգերը կազմված էին հիմնականում ասորերենի, հունարենի, լատիներենի, պարսկերենի, թուրքերենի և այլ լեզուների հնագույն և միջնադարյան տարրերից, ապա ներկայումս արաբերեն դիվանագիտական համակարգը ներառում է տարբեր հիմնականում ֆրանսերենից և անգլերենից:

Այս ոլորտում ուշագրավ է փոխառված բառերի ձուլման խնդիրը: Արաբերենում փոխառված բառը պատճենման եղանակով ձեռք է բերում արաբերեն համարժեքը, օր.՝ **persona non grata** - شخص غير مرغوب فيه [šaḥṣ ǧaīr margūb fihi] (անցանկալի անձ), **cultural attaché** - ملحق ثقافي [mulḥaq taqāfi] (մշակութային կցորդ), **diplomatic corps** - سلك دبلوماسي [silk diblūmāsī] (դիվանագիտական կորպուս), **second secretary** - سكرتير ثاني [sikartīr tānī] (երկրորդ քարտուղար):

Արաբերենին հատուկ է փոխառված նոր տերմինների արաբականացումը (التعريب) [al-taʿrīb], ըստ որի՝ փոխառված օտար բառը հարմարեցվում է արաբերենին հատուկ կադաստրներին⁷, օր.՝ **دبلوماسية** [dīblūmāsīyyah] (դիվանագիտություն), **دكتاتورية** [diktātūrīyyah] (բռնապետություն), **ديمقراطية** [dīmūqrāṭīyyah] (ժողովրդավարություն), **حصانة دبلوماسية** [ḥaṣānah diblūmāsīyyah] (դիվանագիտական անձեռնմխելիություն) և այլն:

Արաբերեն դիվանագիտական տերմինների կազմության հաջորդ եղանակը **բառային-իմաստաբանական** մեթոդն է, ըստ որի՝ որպես օտար տերմինի համարժեք ընտրվում է հոմանիշ, համանուն կամ բազմիմաստ բառային մի տարբերակ:

Տերմինաբանության կարևորագույն խնդիրներից է երկու կամ ավելի հասկացությունները մեկ տերմինով արտահայտելու միջոց գտնելը: Վ. Մ. Բելկինը նշում է, որ «նույն բառը կարող է ունենալ մի քանի տարբեր իմաստներ: Այդ իմաստները կարող են կապված լինել միմյանց հետ և կազմել իմաստաբանական միասնություն ընդհանուր հայեցակարգային հիմքի վրա (բազմիմաստություն), կամ կարող են ստեղծել իմաստային առումով չկապակցված բառերի ձայնային համալիր-

⁶ Ст' u Белкин В.М. Арабская лексикология, М., Наука, 1975, էջ 98-99:

⁷ الغنود سعد العتيبي، المصطلح الدبلوماسي العربي: دراسة في البناء والاستعمال، الدوحة، جامعة قطر، 2014، ص. 66.

ների նմանություն (համանունություն)»⁸:

Արաբերենում **բազմիմաստություն** տերմինը նշվում է երկու տարբերակով՝ الاشتراك [al-āištirāk] և تعدد المعاني [ta‘addud al-ma‘ānī], իսկ **համանունությունը**՝ الاشتراك اللفظي [al-āištirāk al-lafẓī], المشترك اللفظي [al-muštarak al-lafẓī] և اللفظ المشترك [al-lafẓ al-muštarak] բառային ձևերով:

Արաբերենի դիվանագիտական տերմինաբանության մեջ խնդրահարույց են հենց բազմիմաստությունն ու համանունությունը: Շատ հետազոտողներ կարծում են, որ բազմիմաստությունը անցանկալի է տերմինաբանության մեջ և կարող է հանգեցնել որոշ դժվարությունների: «Այն որոշ չափով վնասակար երևույթ է տերմինների և տերմինագիտության համար: Դա կարող է հանգեցնել տերմինի անհստակության, բովանդակության անորոշության, դրա ընդլայնման, ինչը իր հերթին կարող է հանգեցնել տարաձայնության, խառնաշփոթության հասկանալու տերմինը՝ որպես միավոր, որը բնութագրվում է բովանդակության ճշգրտությամբ և հատուկ իմաստաբանական ծավալով»⁹: «Իմաստային բազմակողմանիությունը լեզվում կարող է երկիմաստության աղբյուր լինել»¹⁰:

Դիվանագիտական լեզվում ևս կան մեկից ավելի իմաստ արտահայտող տերմիններ: Օր. مذكرة [muǧakkaraah] տերմինը միաժամանակ նշանակում է նոտա, հուշագիր, գրություն, بيان [baiān] տերմինը նշանակում է հայտարարություն, հոշակագիր, կոմյունիկե, مؤتمر [mū‘tamar]՝ **համաժողով, կոնգրես, համագումար** և այլն:

Ինչ վերաբերում է համանուններին, ապա դրանք հնչումով կամ գրությամբ նույնական տերմիններ են, որոնք տարբերվում են իմաստով և պատկանում են տերմինաբանական տարբեր համակարգերի: Օր. عملية [‘amalīyyaah] տերմինը դիվանագիտության մեջ գործածվում է **գործընթաց, գործողություն** իմաստով, իսկ բժշկագիտության մեջ՝ **վիրահատություն** իմաստով, سلك [silk]՝ դիվանագիտության մեջ՝ **կորպուս, անձնակազմ**, իսկ շինարարության ոլորտում՝ **մետաղալար**:

Տերմինների և հասկացությունների անհամապատասխանության մեկ այլ տեսակ է դիվանագիտական տերմինների **հոմանիշությունը**: Ըստ տերմինաբան Ս. Վ. Գրինյովի՝ «տերմինների հոմանիշության խնդիրը, այսինքն՝ մի հասկացություն անվանակոչելու համար մի քանի բառային միավորների օգտագործումը, տերմինաբանության հիմնական և կարևորագույն խնդիրներից մեկն է»¹¹:

Հին շրջանի արաբ լեզվաբանների մեջ կարելի է առանձնացնել Ալ-Ասմահին (740-828 թթ.), որը սովել է հոմանիշության սահմանումը որ-

⁸ Белкин В. М., նշվ. աշխ., էջ 130:

⁹ Амер Мухамед Ахмед. Научно-технические термины-неологизмы в современном русском литературном языке: На материале словарей 70-80-х гг.: Дис. ... канд. филол. наук: 10.02.01. М., 1994, էջ 233:

¹⁰ Суперанская А. В., Подольская Н. В., Васильева Н. В., նշվ. աշխ., էջ 43:

¹¹ Гринев С. В., նշվ. աշխ., էջ 106:

պես «մի քանի բառ և մեկ իմաստ», և Միբաուեյիիին (760-796 թթ.)՝ «երկու բառ և մեկ իմաստ»: Իբն Ջիննին (934-1002 թթ.) հոմանիշությունը մեկնաբանել է որպես «մեկ իմաստի համար բազում անվանումների գոյություն»¹²:

Հոմանիշների քանակի տեսանկյունից արաբերենը աշխարհի ամենահարուստ լեզուներից մեկն է: Արաբերենի դիվանագիտական տերմինաբանության մեջ հոմանիշային գույգերը հիմնականում առաջանում են փոխառված բառի և դրա արաբերեն համարժեքի ստեղծմամբ, ինչպես օրինակ **حق النقص** [ḥaq al-naqḍ] (**վետտ**), ինչպես նաև **الإتيكيت** [al-itīkīt] և **أدب اللياقة** [ādab al-līāqaah] (**վարվելակարգ**) և այլն, որոնք տարբերվում են կիրառության բնագավառով ու հաճախականությամբ և որպես ոճական տարբեր շերտերի բառեր՝ հոմանիշային առնչություններ ունեն միմյանց հետ:

Մյուս կողմից, արաբերենի դիվանագիտական լեզվում կարող են գոյություն ունենալ արաբական ծագումով բառեր, որոնք մատնանշում են հասկացությունը նրբիմաստային տարբերություններով, օր. **هայ-տարարություն** բառի համար կիրառվում են **بيان** [baīān], **إعلان** [i'lān], **تصريح** [taṣriḥ] տերմինները, իսկ **բանակցություններ** բառի համար՝ **مفاوضات** [mufāwadaṭ], **مادثات** [muḥādaṭāt], **مباحثات** [mubāḥaṭāt] տերմինները:

Տերմինակազմության հաջորդ միջոցը **ձևաբանական** եղանակն է: Դրա միջոցով մի արմատային հիմքի վրա ձևավորվում են նոր տերմիններ, որոնք համարվում են ածանցյալ բառեր: Ինչ վերաբերում է դիվանագիտության տերմինաբանությանը, ապա այստեղ ևս, ինչպես արաբերենի ցանկացած տերմինային համակարգում, ակտիվորեն օգտագործվում են տարբեր ածանցյալ մոդելներ:

Արաբերենում բառերի ձևաբանական կազմն ուսումնասիրող բաժինը կոչվում է **الاشتقاق** [al-aiṣṭiqāq] (**բառակազմություն**): Բառակազմությունը արաբերենում ուսումնասիրում է ձևաբանական և քերականական տարրերի համակցությամբ նոր բառերի ստեղծումը: Դիվանագիտական տերմինների ձևաբանական կազմության մեջ արաբերենում մեծ տեղ է զբաղում բայի **մասդարը**¹³: Նոր տերմինների կազմության մեջ շատ հաճախ հանդիպող մասդարի բառային կաղապարներ են

1. **تفاعل** [tafa' ul] – **تحالف** [taḥāḷuf] (դաշինք), **تضامن** [taḍāmun] (համերաշխություն), **تعاون** [tā'awn] (համագործակցություն),
2. **مفاعلة** [mufa'alaah] – **مصالحة** [muṣāḷahaah] (հաշտություն), **معاهدة** [mū'āhādaah] (պայմանագիր), **مفاوضة، مباحثة** [mufāwadaah, mubāḥaṭaah] (բանակցություն),
3. **افتعال** [aifti'āl] – **انتلاف** [ai'itilāf] (կոալիցիա), **اتفاق** [aittifāq] (համաձայնություն), **اعتذار** [ai'tidār] (ներողություն),

¹² محمد علي النجار، الخصائص صنع أبي الفتح عثمان، القاهرة، دار المعرفة، الجزء الأول، 1999، ص. 113

¹³ Արաբերենում բայից ածանցվող գոյականակերտ անուն:

Բացի մասդարի բառային կաղապարներից՝ գործածվում են նաև բայի ենթակայական դերբայ, օր. متفعل [mutafa‘il], متطرف [mutaṭṭarriḥ] (ծայրահեղ), متشدد [mutašaddid] (խիստ), ինչպես նաև հարակատար դերբայ մատնանշող բառային կաղապարներ, օր. مبعوث [mab‘ūṭ] (պատվիրակ), սակայն ի տարբերություն մասդարի, վերոնշյալ բառային կաղապարներով տերմինների կազմության դեպքերն ավելի սակավաթիվ են:

Բացի բայի բառային կաղապարներից՝ գոյություն ունեն նաև խոսքիմասային այլ բառային կաղապարներ, որոնցից կազմվում են նոր տերմիններ:

Տերմինի ձևաբանական կազմության հաջորդ տեսակը **կոնվերսիան** է, որի դեպքում տեղի է ունենում խոսքիմասային անցում, օրինակ, մի խոսքի մասի հիմքի վրա ածանցման եղանակով կազմվում է մեկ այլ խոսքի մաս, ինչպես سَوَى [saūwā] բառից (հարթել, կարգավորել), որը բայ է, ստեղծվում է تَسْوِيَةً [tasuwīaah] (կարգավորում) բառը որպես մասդար, կամ حَلَّ [ḥalla] բայից (լուծել) حَلًّا [ḥall] (լուծում) բառը և այլն:

Ածանցումը և փոխակերպումը՝ որպես տերմինների ձևաբանական կազմության արդյունավետ եղանակներ, լայն կիրառություն ունեն արաբերենի դիվանագիտական տերմինաբանության մեջ, ինչի մասին վկայում է բայահիմքից կանոնավոր ածանցվող կաղապարների բոլոր տեսակների կիրառությունը, ինչպես նաև քերականական մի դասից մյուսին ազատ անցումը:

Դիվանագիտական տերմինների կազմության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում **բառային-իմաստաբանական եղանակը** կամ բառիմաստի ընդլայնումը, որը հիմնված է գոյություն ունեցող բառի նոր իմաստի կազմության վրա, այն է՝ հին իմաստը շարունակում է գոյություն ունենալ նորի հետ: Այստեղ Ս. Վ. Գրինյովը առաջարկում է կենտրոնանալ բառի տերմինացման վրա, այսինքն՝ արդեն գոյություն ունեցող բառից տերմինի ձևավորումը կամ ընդհանուր բառապաշարից փոխառությունը¹⁴:

Բառիմաստի ընդլայնմամբ տերմիններ ստեղծելու միտումը արաբերենի տերմինակազմության հիմնական խնդիրներից է, քանի որ այս եղանակը, ըստ էության, նպաստում է սեփական բառային միջոցներով տերմինահամակարգերը կատարելագործելուն:

Արաբերենում տերմինի իմաստաբանական կազմությունն ունի մի քանի անվանումներ, ինչպիսիք են التوليد المجازي [al-taūlīd al-maǧāzīy], النقل المجازي [al-naql al-maǧāzīy] և المجاز [al-maǧāz], բայց առավել հաճախակի է դարձել վերջինիս գործածությունը¹⁵:

Եթե տերմինի ձևաբանական կազմության մեջ բազան բառի հիմքն է, ապա բառային-իմաստաբանականում նրա իմաստն է, այսինքն՝ գո-

¹⁴ Гринев С.В., նշվ. աշխ., էջ 129:

¹⁵ علي القاسمي، علم المصطلح، أسسه النظرية وتطبيقاته العلمية، القاهرة، مكتبة لبنان ناشرون، 2018، ص. 356.

յություն ունեցող բառերի միջոցով նոր իմաստների ձեռքբերումը, այն է՝ վերաիմաստավորումը: Ժամանակակից արաբերենի դիվանագիտական լեզվում հին իմաստներից նորերին անցման օրինակները քիչ չեն: Օր. ʿ برید [barīd] (նախնական նշանակությունը՝ փոստատար ջորի): Այժմ դիվանագիտական ներկայացուցչությանը և դրա գործառնություններին վերաբերող պաշտոնական թղթակցությունը, փաստաթղթերը, բացառապես դիվանագիտական ներկայացուցչության պաշտոնական կիրարկության համար նախատեսվող առարկաները արտահայտվում են بريد دبلوماسي [barīd diblīmāsīy] (դիվանագիտական փոստ) տերմինով:

Բառային-իմաստաբանական կազմության օրինակ է նաև իմաստի ընդլայնմամբ տերմին կազմելու միջոցը: Օր. ʿ قضية [qaḏīyyaah] (դատական գործ) կազմված է قضي [qaḏāā] (դատել) բայից: Նշյալ բառի իմաստի ընդլայնմամբ այն սկսվել է կիրառվել որպես «հիմնախնդիր» իմաստով:

Դիվանագիտության տերմինների շարքում կան տերմիններ՝ կազմված իմաստի նեղացմամբ: Օր. ʿ ملف [milaff] (նախնական իմաստ՝ թղթերի փաթեթ, թղթապանակ) օգտագործվում է՝ մատնանշելու ինչ-որ քննարկվող հարց կամ խնդիր (الملف النووي الإيراني) [al-milaff al-nawaūy al-īrānīy] Իրանի միջուկային ծրագրի հարց) և այլն:

Հանդիպում են նաև իմաստի փոխաբերությամբ իմաստաբանական կազմության դեպքեր, օր. ʿ أفق [āfāq] (հորիզոններ) օգտագործվում է «հեռանկարներ» նշանակությամբ:

Արաբերենի դիվանագիտական տերմինաբանության կազմության մեջ կան նաև փոխաբերության հենքի վրա ձևավորված տերմիններ: Այն կարող է լինել գործառնությունների և արտաքին նմանության կամ ձևի նմանության հիման վրա (نظام الغرفتين) [niḏām al-ḡurfataīn] երկպալատ համակարգ):

Բառային-իմաստաբանական ածանցման մեջ են մտնում այլ ոլորտների տերմինաբանական համակարգերից ներմուծված տերմինները: Օր. ʿ قطب [qutb] (բևեռ) աշխարհագրական տերմինը դիվանագիտական լեզվում արտահայտվում է نظام القطبين [niḏām al-qutbīn] (երկբևեռ աշխարհակարգ) նշանակությամբ:

Այսպիսով, բառային-իմաստաբանական եղանակով կազմված դիվանագիտական տերմինները արաբերենում ձևավորվում են ընդհանուր բառապաշարից բառերի փոխառությամբ, ինչպես նաև տերմինաբանական այլ համակարգերից վերցված տերմիններով:

Արաբերենում գործում է նաև տերմինակազմության **շարահյուսական** եղանակը, ըստ որի՝ դիվանագիտական տերմինահամակարգերը համալրվում են բառակապակցական միավորներով: Դրանք կայուն կապակցություններ են, որոնք բաղկացած են երկու կամ ավելի բառերից, որի էությունը բառերի զուգակցմամբ տերմինների կառուցումն է¹⁶:

¹⁶ St' u Amer Muxamed Axmed., նշվ. աշխ., էջ 93

Օր. رأسمالية [ra'asmālīyaah] (կապիտալիզմ) կազմված է رأس [ra'as] (գլուխ) և مال [mal] (ֆինանսներ) բառերի գուգակցումից:

Տերմինների կազմության **ձևաբանական-շարահյուսական** եղանակի մեջ առանձնացվում են էլիպսիսը, բառաբարդումը և հապավումը:

Էլիպսիսի դեպքում բաց է թողնվում տերմինաբանական բառակապակցության մեկ տարրը՝ միաժամանակ պահպանելով բառի մնացած իմաստը: Օր. وزارة الشؤون الخارجية [wizāratu al-šū'ūn al-ḥārīǧīyah] (արտաքին գործերի նախարարություն) կապակցության մեջ գրեթե միշտ բաց է թողնվում الشؤون [al-šū'ūn] (գործեր) տարրը, որը չի ազդում բառի իմաստի փոփոխության վրա:

Հապավման գործընթացի ժամանակ օգտագործվում է նշանների նվազագույն քանակ, որոնք կարող են պարունակել առավել մեծ հասկացություններ: Հապավումը՝ որպես լեզուն նոր բառարանային միավորներով համալրելու միջոց, կիրառվում է շատ լեզուներում: Լեզվի բառապաշարի կրճատման արդյունավետությունը պայմանավորված է «բառապաշարային միջոցները խնայելու» անհրաժեշտությամբ: Հապավումը՝ որպես տերմինների ձևավորման միջոց, առաջնային և նույնիսկ տնտեսող դեր է խաղում մի շարք լեզուներով կազմակերպությունների, արհմիությունների և այլ հաստատությունների անունների փոխանցման գործում: Արաբերենով, որը ավելի շուտ ձգտում է հասկացության նշանների «ընդլայնման», քան «սեղման», նույնպես հանդիպում են հապավումների կազմության դեպքեր, օր. منظمة الدول المصدرة للنفط [munazzamaṭu al-duwālī al-muṣaddiraṭu lilnaft] (Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն, որը հաճախ հանդիպում ենք անվանման միայն առաջին տառերով՝ أوبك, այն էլ անգլերեն հապավմամբ): Ի տարբերություն վերջինիս حركة المقاومة الإسلامية [ḥarakatu al-muqāwamaṭi al-islāmīyatu] (Իսլամական դիմադրության շարժում՝ Համաս) դեպքում կիրառվում է արաբատառ գրառում և այլն:

Արաբերենում հապավման ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողները այն կարծիքին են, որ այն բնորոշ չէ արաբների լեզվին, որովհետև ի հայտ են գալիս անորոշ և ոչ ճշգրիտ բառեր¹⁷: Հարկ է ընդգծել, որ արաբերենում հապավումը շատ հազվադեպ է կիրառվում:

Բառաբարդումը التركيب [al-tarkīb], նույնպես նպաստել է ներկայիս դիվանագիտական տերմինաբանական համակարգի համալրմանը արաբերենում, օր. متعدد الأطراف [muta'addidu al-'aṭrāf] (բազմակողմ), فوق العادة [faūqa al-'ādaah] (արտակարգ), ذات الصلة [ḍāt al-ṣillaah] (համապատասխան) և այլն:

Արաբերենի դիվանագիտական տերմինների կազմության վերջին եղանակը **թարգմանությունն** է: Դրա միջոցով մի լեզվից մյուս լեզու են անցնում տերմիններ իրենց ամբողջական տեսքով՝ պահպանելով տվյալ

¹⁷ محمد يوسف حسن، دور النحت في تيسير الأداء العلمي بالعربية، مجلة مجمع اللغ العربية، عدد 78، القاهرة، 1994، ص. 124.

բառի կամ բառակապակցության առանձնահատկությունները՝ առանց խեղաթյուրելու այն: *Or. تعيين سفير* [ta'yin safir] (դեսպանի նշանակում), *أوراق اعتماد* [aūrāq a'tmād] (հավատարմագրեր), *علاقات متعددة الأطراف* ['alāqāt muta'addidu al-'aṭrāf] (բազմակողմանի հարաբերություններ):

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ արաբերենի դիվանագիտական լեզուն՝ որպես տերմինաբանական ուրույն ենթալեզու, մշտապես զարգանում և համալրվում է նոր միավորներով, որոնք տարբերվում են տերմինաբանական այլ համակարգերի բառապաշարից: Բառապաշարի համալրման գործընթացն ուղեկցվում է ինչպես փոխառության, թարգմանության, այնպես էլ արաբերենի բառապաշարի և արաբերենին հատուկ բառակազմական կաղապարների կիրառությամբ:

Բանալի բառեր – *տերմին, տերմինաբանություն, արաբերենի դիվանագիտական լեզու, փոխառություն, բառապատճենում, բառակազմություն, թարգմանություն, ձևաբանական մեթոդ, շարահյուսական մեթոդ, բառային-իմաստաբանական մեթոդ*

АРА МАТЕВОСЯН – Особенности образования арабских дипломатических терминов. – Арабский язык дипломатии, то есть терминологический подъязык с особой лексикой, отличается такими чертами, как точность, торжественность, вежливость и т. д. Этот подъязык складывается из множества профессиональных терминов, понятных только специалисту в данной области. Система арабской дипломатической терминологии пополняется за счёт заимствования иноязычных слов, перевода, а также ряда способов словообразования, присущих арабскому языку: морфологического, лексико-семантического, синтаксического, морфолого-синтаксического.

Ключевые слова: *термин, терминология, арабский дипломатический язык, заимствование, калькирование, словообразование, перевод, морфологический метод, синтаксический метод, лексико-семантический метод*

ARA MATEVOSYAN – Peculiarities of the Formation of Arabic Diplomatic Terms. – The Arabic language of diplomacy, as a terminological sub-language with special vocabulary, stands out with features like accuracy, solemnity, politeness, etc. This terminological sub-language consists of many professional terms that are understood only by specialists of the field. The system of Arabic diplomatic terminology is supplemented with new terms through borrowings from different languages, translations, as well as a number of lexical-semantic, syntactic, and morphological-syntactic methods of word formation in Arabic.

Key words: *term, terminology, Arabic diplomatic language, borrowing, calquing, word formation, translation, grammatical method, syntactic method, lexical-semantic method*